



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՐԵԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



ԳՐԻԳՈՐՅԱՆ

21» 12 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 112

Ձեռնարկողը՝

<<Հայնախագիծ>> ԲԲԸ

Ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝

**Մեղրի համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված
տարածական պլանավորման փաստաթղթի (Սյունիք-3)
շրջակա միջավայրի վրա ազդեցության ուղղմամբ համապատասխան
գնահատման հաշվետվություն**

Սյունիքի մարզ

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ
տնօրենի ժ/պ՝**



Ռ. Ոսկանյան

Միկրոռեգիոնի ընդհանուր մակերեսը կազմում է 3201,39հա, այդ թվում բնակավայրային հողեր՝ 224,1հա (հեռանկարում-266,046հա), Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 107,01հա (հեռանկարում-102,58հա), էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 18,43հա (հեռանկարում-28,758հա), հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 905,7հա (հեռանկարում-907,124հա), այդ թվում բնապահպանական տարածքներ՝ 901,26հա, որի հեռանկարային սահմանները դեռ ճշտվում են, հատուկ նշանակության հողեր՝ 75,66հա (հեռանկարում 76,06հա), գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1852,65հա (հեռանկարում 1802,982հա), անտառային հողերը բացակայում են, ջրային հողեր՝ 17,84հա (հեռանկարում 17,84հա):

Մեղրու շրջանի տարածքը դեռ հնադարում եղել է Հայաստանի կազմում՝ Երվանդունիների (մ.թ.ա. 570-201) և Արտաշեսյանների (մ.թ.ա. 189-1) թագավորության ժամանակ:

Համայնքը սահմանակից է Իրանին /սահմանի երկարությունը 42.0կմ է/, Ադրբեջանին և Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը:


Մեղրիի շրջանը գտնվում է Զանգեզուրի հարավում, 390.0մ–ից՝ (Մեղրու կիրճ) մինչև 3904.0մ (Կապուտջուղ) բարձրությունների վրա: Ունի լեռնային կտրտված մակերևույթ: Հյուսիսում և հյուսիս-արևելքում Մեղրու լեռնաշղթան է, արևմուտքում՝ Զանգեզուրի լեռնաշղթան: Տարածքի զգալի մասը զբաղեցնում է Մեղրու կիրճը:

Կան ոսկու բազմամետաղային, պղնձի, մոլիբդենի, նեֆելինային սիենիտի, երկաթի, կրաքարի հանքավայրեր: Շրջանում գերակշռում են անտառային ու ալպյան մարգագետնային լանդշաֆտները: Գեոմորֆոլոգիական տեսակետից, ինչպես նշվել է, հիմնական տարածքը պատկանում է Մեղրի գետի հովտին, բավականին լայն հունային հատվածով՝ ներկայացված գլաքարա-ճալաքարային նստվածքներով, վերինային դարավանդերով և էրոզիոն-դենուդացիոն լանջերով՝ պատված չոր ձորակների ցանցով և թթու, ինտրուզիվ ապարների ելքերով:

Մեղրի համայնքի բնակչության ընդհանուր թիվը 2016 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 10349 մարդ: Ըստ պատմամշակութային և բնական ժառանգություն Մեղրիի տեսարժան վայրերից է Մեղրու ամրոցը, 17-րդ դարում կառուցված Մեծ թաղի Սբ. Աստվածածին ու Փոքր թաղի Սբ. Հովհաննես եկեղեցիները: Քաղաքի մոտակայքում է գտնվում նաև 15-18-րդ դդ. Մեղրու վանքը:

Կենսաբազմազանության, հազվագյուտ և անհետացման վտանգված տեսակների, բնության եզակի հուշարձանների պահպանությունը, էնդեմիկ և հազվագյուտ կենդանիների միջսահմանային /ռեգիոնալ՝ Հայաստան-Իրան-Ադրբեջան/ բնակմիջավայրերի պահպանությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. դեկտեմբերի 26-ի թիվ 54 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարություն և գործողությունների 2003-2010թթ. ազգային ծրագրով» նախատեսված է «Բողաքար» արգելավայրի բազայի վրա ստեղծել «Արևիկ» պետարգելոցը:

Ծովի մակերևույթից 3250մ բարձրության վրա փռված Կապույտ լճից սկիզբ է առնում Մեղրի գետը: Սկսվում է Մեղրու լեռնաշղթայի ջրբաժան հատվածից՝ Կապույտ լճից և Տաշտունի լեռնանցքի մի քանի աղբյուրներից, որոնք բխում են 2240.0մ բարձրությունից: Գետի ջրերն օգտագործվում են շրջակա տարածքներում խաղողի և պտղատու այգիների ոռոգման համար: Բնության հուշարձաններից նշանավոր է Կարճևանի ջրանցքը և Կապույտ լիճը, որը գտնվում է Մեղրի գետի ակունքներում՝ Լիճք գյուղից մոտ 8.0կմ հյուսիս-արևմուտք: Այն գրանցված է բնապահպանության նախարարության բնության պետական հուշարձանների ցանկում:



Տարաբնակեցման համակարգի և ենթակառուցվածքների առկա վիճակի գնահատման արդյունքում տարանջատվել է քաղաքաշինորեն, տնտեսապես ինտենսիվ յուրացված գոտին, որն ընդգրկում է Արաքսի գետահովտի մի հատվածը, Մեղրի գետի ստորին հոսանքը, Կարճևան գետի ավազանը: Գոտում են տեղադրված Մեղրի, Ագարակ քաղաքային, Կարճևան, Կուրիս, Գուդեմնիա, Լեիվազ գյուղական համայնքները: Գոտում զարգացած է նաև գյուղատնտեսությունը: Վարելահողերի և բազմամյա տնկարկների 8-9%-ը գտնվում է այս գոտում:

Ներկայումս գործող տրանսպորտային հիմնական մայրուղին Կապան-Քաջարան-Դեբակլուի լեռնանցք Մեղրի ճանապարհն է:

Խմելու և տեխնիկական նպատակներով օգտագործվող ջրի պաշարներով գոտու բնակավայրերը ապահովված չեն: Հաշված պաշարները կազմում են 24,4մլն.մ³ (ըստ երկրաբանական տվյալների), որոնք չեն կարող ապահովել գոտու բնակավայրերի ջրի պահանջը: Մեղրի քաղաքի ջրամատակարարումն իրականացվում է Լիճք և Զվար գետերի վրա կառուցված գետային ջրընդունիչներից, որոնց ելքը կազմում է 60.0լ/վ, ինչպես նաև Սեթենց աղբյուրակապերից:

Էներգամատակարարման տեսակետից գոտու բնակավայրերը գտնվում են սահմանափակ բարենպաստ գոտում: Բնակավայրերի հեռավորությունը էլեկտրակոմունիկացիաներից և կառուցվածքներից չի գերազանցում 20.0կմ-ը: Գոտին ապահովված չէ բնական գազով:

Սանիտարահիգիենիկ տեսակետից քաղաքացիական շինարարության համար անբարենպաստ են հանքավայրերի և հանքապոչերի (թափոններ) վնասակար ազդեցության շերտերը:

Գյուղատնտեսական օգտագործման համար իրացված է գոտու տարածքի 15,0-16,0%, հաշվի առնելով, որ հողահանդակների հիմնական մասը արոտներն են ու խոտհարքները: Գյուղատնտեսության հիմնական ճյուղերը պտղաբուծությունն է և անասնապահությունը: Տարածաշրջանի գյուղատնտեսական հողերի զգալի տոկոսը բաժին է ընկնում Վարդանիձոր բնակավայրին (17.1%): Գրեթե համազոր մեծության են Մեղրի (13.3%), Ավանք (14.9%), Նոնաձոր (14.7%) բնակավայրերի գյուղատնտեսական հողերի մասնաբաժինները: Մյուս բնակավայրերի գյուղատնտեսական հողատեսքերը տանատնվում են 2.0-8.0%-ի սահմաններում: Գյուղատնտեսական հողերի ամենափոքր տոկոսով օժտված է Ագարակ (0.1%) բնակավայրը:

Ինժեներաերկրաբանական բարդ պայմանները դժվարեցնում են տրանսպորտային ուղիների, ինժեներական կոմունիկացիաների շինարարությունը, ինչպես նաև գյուղատնտեսության մեքենայացմանը:

Հանգստի կազմակերպման համար հնարավոր է օգտագործել միայն անտառային զանգվածային ստորոտները (Զվարի գետի վերին հոսանքում, Լիճք գյուղից դեպի հարավ-արևմուտք): Նպաստավոր պայմաններ են Լիճք, Տաշտուն գյուղերի, Մեղրի-Քաջարան ճանապարհի առկայությունը, Զվարի գետի գեղատեսիլ լանդշաֆտը: Զվարի գետի ակունքներում գտնվող խմելու և հանքային ջրերի պաշարները ենթակա են հետագա ուսումնասիրության:

Ըստ առկա բնապահպանական վիճակի նկարագրության տարածաշրջանի լեռնային ռելիեֆը, բարձրությունների մեծ տարբերությունները, լանջերի տարբեր դիրքադրությունները, կլիմայական մեծ հակադրությունները, բնակչության կենտրոնացումը գետահովիտներում և մայրուղիների շուրջ, զարգացած լեռնահանքային արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և տրանսպորտը իրենց ազդեցություն են թողել էկոլոգիական իրավիճակի վրա:

Տնտեսության կարևոր ճյուղերն են հանքարդյունահանող ու սննդի արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը:



Հողերի աղտոտման աղբյուր են հանդիսանում գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը /լեռնամետալուրգիական, լեռնարդյունահանող քարի մշակում, քիմիական և այլն/, էներգետիկան, տրանսպորտը, կոմունալ տնտեսությունը և այլն:

Մեղրու տարածաշրջանին բնորոշ գլխավոր խնդիրներից է տնտեսության բազմաճյուղության ցածր մակարդակը: Տնտեսության 80%-ը պատկանում է հանքարդյունաբերությանը, և համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը, բնակչության կենսագործունեությունը մեծապես կախված են համաշխարհային շուկայում պղնձի, մոլիբդենի և ոսկու գներից:

Համայնքի հիմնախնդիրներից կարևորվում է բնակչությանը նորմատիվային պահանջներով ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներով և բնակելի բազմաբնակարան շենքերի սեյսմակայունության ապահովումը, բնակելի թաղամասերի կանաչապատումը և ոռոգման համակարգի կանոնավոր գործարկումը, աշխատունակ բնակչության զբաղվածության խնդրի լուծումը:

Համայնքի հեռանկարային զարգացման ծրագրի կարևոր դրույթներից են.

- Մեղրի համայնքի աղբահանության, սանմաքրման, բնակավայրերի բարեկարգման աշխատանքների իրականացումը,
- Սյունիքի տարածաշրջանի բնակավայրերի միջև տրանսպորտային կապի ստեղծումը,
- Մեղրու ինքնահոս ոռոգման համակարգի երկրորդ՝ Ագարակ-Կարճևան հատվածի կառուցումը,
- ներքին ցանցի հիմնանորոգման աշխատանքների ու պատկան մարմինների հետ համապատասխան ծրագրերի իրականացումը,
- փոքր և մեծ ջրամբարների կառուցումը,
- Նոնաձորի ռազմավարական նշանակության ճանապարհի հիմնանորոգումը, նկատի ունենալով որ այն ԼՂՀ-ի սահմանի հետ հաղորդակցության կարևոր ուղիներից է,
- համայնքում երիտասարդական քաղաքականության հայեցակարգի մշակումը՝ ներառելով զբաղվածության խնդրի կարգավորման, ազատ ժամանցի և հանգստի խելամիտ կազմակերպումը, երիտասարդ ընտանիքների հիմնախնդիրների աստիճանական լուծումը, մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում բարենպաստ պայմանների ստեղծումը, երիտասարդության ռազմահայրենասիրական ու ֆիզիկական դաստիարակությունը և այլն:

Ըստ հատակագծային կառուցվածքի տարածաշրջանի գյուղական բնակավայրերի գերակշիռ մասի հատակագծային կառուցվածքները ձևավորվել են տարերայնորեն՝ պատմականորեն ձևավորված քաղաքային միջուկի շուրջ: Փողոցային ցանցի կազմակերպման համար հիմք է հանդիսացել բնական ռելիեֆը: Հիմնականում փողոցները ներգծված են ռելիեֆին՝ ապահովելով գրեթե նորմատիվ թեքություններ, այնուհանդերձ մի շարք հատվածներում դրանք իրականացված են ռելիեֆին գրեթե ուղղահայաց ուղղությամբ, ինչը եղանակային վատ պայմաններում դժվարացնում է երթևեկությունն ու անանցանելի դարձնում ծայրամասային հատվածներ:

Կառուցապատումը ևս ենթարկված է բնական լանդշաֆտի թելադրած պայմաններին, ինչի հետ կապված էլ դրանցից որոշներն ունեն կոմպակտ, մյուսները գծային կամ տարանջատ հատակագծային կառուցվածք:

Բնակավայրերի կտրվածքով նախատեսվել է դրանց առանձին տարածքային զարգացման հնարավորությունները, ինչպես նաև միասնական տարածաշրջանային զբոսաշրջային երթուղիներում ընդգրկվելու դեպքում անհրաժեշտ միասնական ենթակառուցվածքների տեղաբաշխման վայրերը: Տրվել են առաջարկներ նաև քաղաքի



հանրային ենթակառուցվածքների ընդլայնման և գոյություն ունեցողների կատարելագործման ուղղությամբ:

Քաղաքն ամբողջությամբ կոյուղացված չէ: Կոյուղացված թաղամասերում էլ 60-ական թվականներին կառուցված խողովակները հիմնականում ասբեստոցեմենտից են և շատ տեղերում ջարդվել են, շարքից դուրս եկել, ունեն բազմաթիվ վթարված հատվածներ, ուստի և չեն ծառայում իրենց նպատակին: Կոյուղու համակարգը կարիք ունի վերակառուցման: Կոյուղու համակարգում մաքրման կայան գոյություն չունի: Հեռանկարում նախատեսվում է կոյուղու հոսքաջրերի հեռացումն իրականացնել միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների միջոցով: Կոյուղու հեռացման ենթակա հոսքաջրերը մաքրման ենթարկելուց հետո միայն ուղղել բաց ջրահոսքեր:

Մեղրի համայնքի գյուղական բնակավայրերը հիմնականում չունեն ջրահեռացման համակարգ, հոսքաջրերն առանց մաքրման, կոյուղատար խողովակներով հեռացվում են մոտակա բաց ջրահոսքեր: Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով սույն նախագծի շրջանակներում նախատեսվում է կոյուղացնել տարածաշրջանի բոլոր համայնքները:

Աղբահանություն կազմակերպող համայնքներում հավաքված աղբը տեղափոխվում է բաց աղբավայրեր: Մարզում կոշտ թափոնների վերամշակման գործարաններ չկան: Սյունիքի մարզում գործում է 6 աղբավայր, որոնք կառավարվում են համայնքների կողմից, իսկ աղբահեռացումն իրականացվում է մասնավոր ընկերության կողմից: Բնակավայրերում տարիների ընթացքում ստեղծվել են կամ տարերայնորեն ձևավորվել են բազմաթիվ աղբավայրեր և աղբանոցներ, որոնք զբաղեցնում են զգալի տարածքներ և առաջացնում են լուրջ բնապահպանական և սանիտարական խնդիրներ:

Թեև Ասիական բանկի կողմից կատարված նախանախագծային հետազոտական աշխատանքների արդյունքում, որպես սանիտարական աղբավայրի տարածք առաջադրվել է Չափնի գյուղի տարածքում 20.0հա հողակտոր, այնուհանդերձ սույն նախագծի շրջանակում լրացուցիչ հարցումների, բնակչության կարծիքների հետազոտության արդյունքում առաջադրվեց Սյունիք բնակավայրի վարչական տարածքում գործող աղբավայրի՝ սանիտարական աղբավայրի վերակազմավորման տարբերակը: Ներկայացված են ընտրված տարածքը սանիտարական աղբավայր կառուցելու և շահագործելու հիմնավորումները:

ԵՄ կողմից ֆինանսավորվող «Բնապահպանական մարտահրավերները՝ առավելություն» ծրագիրը պայմաններ և ենթակառուցվածքներ է ստեղծում պլաստիկ թափոններից ստացված պոլիմերաավազային խառնուրդից շինանյութի՝ մայթերի եզրաքարերի, սալիկների, կղմինդրի և այլ արտադրության համար: Թափոնները հավաքվելու են Վայոց ձոր և Սյունիք մարզերում:

Համաձայն հիմնադրույթային լուծումների, որպես աղբավայր առաջարկվում է Մեղրի քաղաքի մոտակա աղբանոցը: Ներկայացված են ընտրված տարածքը սանիտարական աղբավայր կառուցելու և շահագործելու հիմնավորումները:

Նշված յուրաքանչյուր գյուղական համայնքում տեղակայված է 1 հատ գերեզմանոց: Գերեզմանոցները գործող են: Գերեզմանոցներում սանիտարական պահպանման գոտին պահպանված չէ, ուստի հեռանկարում նախատեսվում է մշակել միջոցառումներ, որոնք կկարգավորեն գերեզմանոցների տարածքները:

Սյունիքի մարզի գյուղատնտեսական հողատեսքերի ոռոգման համակարգերը ներկայումս սպասարկվում է Կապան քաղաքում գործող «Սյունիք» ջրագտագործողների ընկերության կողմից: Ոռոգման ջուր է ստանում մարզի 48 բնակավայր:

Բնակավայրերի տարածքում ոռոգումն իրականացվում է հիմնականում անկանոն կառուցված բետոնե երեսապատված կամ հողային հունով առուների միջոցով, ինչի արդյունքում ջրի զգալի կորուստ է տեղի ունենում:



Հեռանկարում ոռոգման համակարգերը պետք է հագեցվեն ջրամբարներով, ջրանցքների համակարգով, որոնց միջոցով հնարավոր կլինի կանոնավոր ոռոգում իրականացնել: Որպես ոռոգման արդյունավետ եղանակն առաջարկվել է կաթիլային և ոռոգման փակ համակարգերի ներդրումը:

Մարզի տարածքի էլեկտրամատակարարման համակարգի շահագործումն իրականացվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Տաթև» մասնաճյուղի կողմից, որը հիմնականում ապահովում է անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարում: Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին:

Մարզի ողջ տարածքով անցնում է Իրան-Հայաստան գազատարը, որը 140.0 կմ երկարությամբ Իրանից Հայաստան ձգվող խողովակաշար է: Իրականացվում է նաև Ագարակ, Մեղրի քաղաքների գազֆիկացման ծրագիրը: Համայնքի գյուղական բնակավայրերը գազաֆիկացված չեն: Դիտարկվել է նաև այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործումը: Հաշվի առնելով սույն նախագծով ուսումնասիրվող տարածքի բնակլիմայական պայմանները (արևափայլի տարեկան տևողությունը հասնում է շուրջ 2100 ժամի), որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր նպատակահարմար է դիտարկել արևի էներգիան՝ ինչպես ջերմամատակարարման, այնպես էլ էլեկտրամատակարարման բնագավառում:

Մշակվել է նաև աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:

Տարածաշրջանում նախատեսվել է ազատ տնտեսական գոտու ստեղծում՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, գոտու կազմակերպիչ է ճանաչվել պետության կողմից ստեղծված «Մեղրի ազատ տնտեսական գոտի» ՓԲԸ-ն: Ազատ տնտեսական գոտին (ԱՏԳ) նախատեսված է կառուցապատել երկու փուլով:

Ազատ տնտեսական գոտում նախատեսվում է ակտիվացնել Իրանի հետ սահմանային առևտուրը, զբոսաշրջությունը և այլն:

Գոտևորման բաժնում տրվել են հողերի օգտագործման ձևերը, նորմատիվ իրավական պահանջներին համապատասխան գոտիների նկատմամբ չափորոշիչների համալիրը, կարմիր և կառուցապատման գծերը:

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից:

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Հանդիսանալով տարածական պլանավորման փաստաթղթերի հիերարխիական կառուցվածքի երեք մակարդակը (տարածքային հատակագծման նախագիծ, գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ) միավորող փաստաթուղթ, այն դիտարկում է ինչպես տարածաշրջանային նշանակության և կարևորության ընդհանուր մոտեցումները, այնպես էլ յուրաքանչյուր հատակագծային միավորի՝ համայնքի տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը, հետապնդելով մեկ նպատակ՝ բնակչության և այցելուների համար ձևավորել առավել հարմարավետ անվտանգ, ապահով և գեղագիտական բարձր հատկանիշներով օժտված գրավիչ կենտրոնացված զբոսայգիներ:

Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված հիմնադրույթային փաստաթուղթը, բնապահպանության նախարարության համապատասխան տարածքային հատվածից ստացված կարծիքները, առողջապահության և գյուղատնտեսության



Նախարարությունների կարծիքը, ինչպես նաև փորձաքննության գործընթացում ի հայտ եկած դիտողություններն ու առաջարկությունները, Մեղրիի համայնքապետարանում իրականացված հանրային քննարկումների արդյունքները կարելի է անել հետևյալ եզրահանգումները:

Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի և հարակից գյուղական բնակավայրերի տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով գնահատվել է առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները: Բնակավայրի տարածքի կարևոր էկոլոգիական հիմնախնդիրները, որոնք նպաստելու են տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը, լուծվելու են տարածքի հատակագծային կառուցվածքի մշակման գործընթացում: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրվել է համալիրի առանձին տարրերի՝ օդային, հողային, ջրային ավազանի սանիտարահիգիենիկ վիճակը, նրա բարելավման ինժեներական տեխնոլոգիական և ագրոմելիորատիվ միջոցառումները:

Փորձաքննական պահանջներ

1. Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
2. Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում անհրաժեշտ է կատարել մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հանրության համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հայնախագիծ>> ԲԲԸ կողմից ներկայացված Սյունիքի մարզի Մեղրու համայնքի միկրոոեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (Սյունիք-3) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Ա. Դոնոյան

Գլխ. մասնագետ

Կ. Մովսիսյան

